

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐԻ  
ԸՆՆՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Բառապաշարի մի ուրույն և հսկայածավալ շերտ են հատուկ անունները: Դրանց ուսումնասիրությունը խիստ կարևոր է աշխարհագրական որոշակի տարածքում ազգային-լեզվական գործընթացների բացահայտման առումով: Որքան խորանում ենք պատմության մեջ, գրավոր աղբյուրների նվազելուն զուգընթաց, այնքան աճում է հատուկ անունների նշանակությունը: Որոշ տարածքների ազգային-լեզվական հին վիճակի վերաբերյալ մեր միակ աղբյուրը հատուկ անուններն են:

Պատմալեզվական առումով առավել կարևոր են տեղանունները, որոնք ի տարբերություն հատուկ անունների այլ դասերի (անձնանունների, տիեզերական մարմինների անունների և այլն)՝ չեն փոխառվում: Տվյալ տարածքում որևէ լեզվով կազմված տեղանվան առկայությունը անպայմանորեն արդյունք է այդ լեզուն կրողների առկայության (տեղանվան ստեղծման պահին): Մինչդեռ, օրինակ՝ անձնանվան առկայությունը բնավ չի ենթադրում այդ անունն ստեղծած ազգային տարրի գոյությունը տվյալ տարածքում:

Տեղանվան առընչությունն առարկային, որպես կանոն, նվազ պայմանական է, քան անձնանվան առընչությունը անձին: Տեղանվան ստեղծումը պայմանավորված է երեք գործոններով՝ պատմական, լեզվական և աշխարհագրական: Պատմական գործոնը անվանադիր հանրությունն է՝ իր սոցիալ-պատմական և մշակութային զարգացման վիճակով: Լեզվական գործոնը անվանադիր հանրության լեզուն է՝ բառակազմական իր միջոցներով ու մտածողությամբ: Աշխարհագրական գործոնը առարկայական իրականությունն է՝ աշխարհագրական առարկան՝ իր հատկանիշներով: Տեղանունը ստեղծվում է տվյալ տարածքում տվյալ պահին խոսվող լեզվի միջոցներով: Անհայտ ծագմամբ և չստուգաբանվող տեղանունները կամ մեզ հայտնի լեզուների անծանոթ իրողությունների դրսևորումներ են, կամ մնացողներն են այն լեզուների, որոնք երբևէ խոսվել են տվյալ տարածքում, սակայն որոնց մասին տեղեկություն չունենք:

Տեղանունները (աշխարհագրական անունները) իրենց բնույթով խիստ բազմազան ու տարասեռ են, թեև հաճախ լեզվական ու ծագումնաբանական սերտ առընչություններ կան տեղանունների տարբեր խմբերի առանձին դրսևորումների միջև: Լեռնային երկիր Հայաստանի համար խիստ բնորոշ են

լեռնաճյուղերը, որոնց քննության որոշ խնդիրներին է վերաբերում սույն հոդվածը:

Լեռնաճյուղի նկատի ունենք լեռնաշխարհների, լեռնագանգվածների լեռնաշղթաների, լեռնաբազուկների, լեռնագագաթների, մեկուսացած լեռների (սարերի), բլուրների, ժայռերի և այս կամ այն չափի բարձունքներ կայացնող այլ աշխարհագրական-լեռնագրական (երկրաբանական) բնական առարկաների անվանումները:

Հայկական լեռնաշխարհի լեռնաճյուղերի ամենից ամբողջական ցանկը տեղ է գտել «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» (Եր., 1986-2001) (այսուհետ՝ ՀՀԸՏԲ): Այդ նյութի հիման վրա էլ կատարել ենք սույն քննությունը, որը փորձ է ուրվագծելու լեռնաճյուղերի կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումը:

Սանր լեռնաճյուղերի մի ստվար զանգված տեղ չի գտել ՀՀԸՏԲ-ում, որանք կարելի է գտնել տեղագրական քարտեզներում, որոնք հիմնականում ռազմական նշանակություն ունեն և խիստ անմատչելի են: Դրանցից դուրս գրված որոշ ցանկեր պարբերաբար քննարկվում են անվանադիր որոշ ատյանների, հանձնաժողովների կողմից, այդպիսի մանր տեղանունների քննությունը դուրս ենք թողել սույն ուսումնասիրության սահմաններից:

ՀՀԸՏԲ-ում արձանագրված լեռնաճյուղերի մեծ մասը թուրքերեն է, հետևաբար վերաբերում է 11-20-րդ դարերին: Մի փոքր մասը (հիմնականում Արևելյան Հայաստանի վերաբերող) ռուսերեն է, հետևաբար վերաբերում է 19-20-րդ դարերին: Մնացածը առավելապես հայկական ծագում ունի և վերաբերում է ամենատարբեր ժամանակաշրջանների սկսած հնադարից, մինչև մեր օրերը: Երբեմն հանդիպում են նաև վրացական, արաբական, հունական ծագման տեղանուններ, որոնք սովորաբար միջին դարերից են (Արսաբիա լեռներ, Գոմարդո լեռ, Թավկվետելի լեռնագագաթ, Իզոն Բասիլեոն լեռնաշղթա, Լիֆոս լեռնագագաթ, Կացար գլեխ լեռնագագաթ, Էլենոնոս լեռ, Ալ Հարիթ լեռնագագաթ և այլն):

Թուրքերեն լեռնաճյուղերի որոշ մասը թերևս նախկին հայկական անունների թարգմանություն կամ պատճենում է: Դրա անուղղակի վկայություններ են այն տեղանունները, որոնց կազմում հայկական բաղադրիչներ կան (Բլուրդաղ, Գիծդարա, Դարաշամբդաղ, Թալինկայա, Խաչգեղուկ, Խաչդաղ, Խաչթափա, Խոխկերտ-դաղ, Խոզան-դաղ, Խոտորջուրդաղ, Ծապանի-դաղ, Ծմազիկալա, Ծովի-Չայ, Կապանդաղ, Կատարկայա, Կարախաչ և այլն), կամ էլ որոնք հայկական անունների թուրքական աղավաղումներ են (Ալագյազ, Ազնաբյուրտ, Կապուտջուղ, Կամուր, Գյավակ, Գյումարան և այլն):

Նույնը որոշ վերապահությամբ կարելի է ասել ռուսերեն տեղանունների մասին: Դրանք, սակայն, առավելապես վերաբերում են մանր տեղանունների ոլորտին: Դրանք մեծ մասամբ տրվել են մինչ այդ անանուն առարկաներին (Բելայա Գլինա լեռնագագաթ, Բելյանով լեռ, Գրոմովայա լեռ, Լիսայա լեռ, Կլիմովա լեռնագագաթ և այլն):

Հայերեն լեռնանունների մի մասը հին է (Աժդահակ, Ալիարակ, Ականիս, Արեգունի, Արտենի, Բլուր, Բուք, Գեղամ, Գոգի, Գոգուռ, Դյուց, Դրունք, Երտիա, Ջամպ, Թեժ, Թռնդրակ, Իրինդ, Խոյթ, Խոչ, Ծիր, Ծծմակ, Ծղուկ, Կամք, Կանգուր, Կատար, Կինճ և այլն):

Մի այլ մասը նոր ժամանակների կազմություններ են և մեծ մասամբ թուրքերեն ու ռուսերեն անուններին փոխարինելու համար են ստեղծված Արանք հիմնականում թափանցիկ կիսանկարագրական բաղադրյալ կազմություններ են: Հաճախ դրանք թուրքերեն անվանումների պատճենումներ թարգմանություններ են (Գարուսար - Արփաթափա), երբեմն՝ մասնակի թարգմանություններ (Գարահող - Գարաթորփախ, Դալիսար - Դալիդաղ, Դավաքար - Դավադաշ, ինչպես նաև Գարամորուք, Խամշուջուր, Կարախափան, Գոյսար և այլն): Այս վերջին պատճառով հայերեն նոր լեռնանունները արտաքին և ներքին կառուցվածքով հաճախ են նմանվում թուրքերեն անվանումներին (Գոասար, Գալասար և այլն): Հայերեն անունները հաճախ էլ հնքնուրույն նորակազմություններ են (Եղնասար, Դիմաջլեռ, Երիցլեռ և այլն): Երբեմն էլ դրանք ոչ թե տվյալ լեռնագրական առարկայի համար հատուկ ստեղծված անուններ են, այլ հարակից որևէ այլ տեղանվան (գետի, ձորի, բնակավայրի, վանքի անվան) կրկնություններ (Դրդվանք, Դիդիվանք, Խչաղբյուր, Խորափոր, Խոտորջուղաղ, Խոռխոռի այր, Խոխկերտ-դաղ և այլն), այսինքն երկրորդաբար առաջացած լեռնանուններ:

Երբ լեռնանունը և մոտակա այլ տեղանուն(ներ) համընկնում են, հաճախ դժվար է որոշել, թե որն է առաջնային: Օրինակ՝ Խնձորուտի լեռնաշղթա, Խնձորուտ գետ, Խնձորուտ գյուղ, Իրինդ գետ, Իրինդ գյուղ, Ինջա գետ, Ինջա լեռ, Ինջա գյուղ, Թեժ լեռ, Թեժ գետ, Թեժ գյուղ և այլն:

Տարաբնույթ տեղանունների համանունության դեպքում հաճախ տեղանունն ինքն է հուշում, թե սկզբնապես ինչ է եղել՝ ջրանուն, լեռնանուն, թե մի այլ բան: Օրինակ կան Ազնաբերդ անունով լեռ, գյուղ, քայք ակնհայտ է, որ սկզբնապես եղել է համանուն բերդ, հետո առաջացել է նույնանուն գյուղը, այնուհետև այդ անունը տրվել է մոտակա լեռանը: Կան Առաջածոր անունով գյուղ և լեռ. առաջնային է գյուղանունը: Կան Խաչաղբյուր անունով գետ, գյուղ, ուխտատեղի և լեռ. պետք է ենթադրել, որ եղել է նաև նույնանուն աղբյուր, որի անունով կոչվել է սրբավայրը, այնուհետև գյուղը, դրանցից էլ՝ գետը և լեռը:

Մինչդեռ Ճովասար անունով գավառակի և լեռան անուններից բնականաբար առաջնային է լեռնանունը:

Այսպիսով, կան ի սկզբանե լեռնանուններ, որոնք ստեղծվել կան կազմվել են հատկապես լեռնագրական միավոր անվանելու համար: Օրինակ խաչինխուք, խաչկատար, երկաթասար, Վանքասար, Չազա գլուխ, Դալիդաղ, Գաշին-Բաշի, Գազան Գայա, Գաբաղթափա և այլն:

Լեռնանունների շարքում կան թե պարզ (արմատական) բառեր, թե ածանցյալներ, թե բարդ բառեր: Հայկական լեռնանունները մեծ մասամբ բաղադրյալ կազմություններ են: Ածանցավոր կազմությունները պակաս տարածված են: Շատ չեն նաև պարզ կազմությամբ լեռնանունները:

Պարզ բառերը երբեմն նախկին մթազնած ու վերախմբավորված բաղադրություններ են, որոնց ստուգաբանությունը ոչ միշտ է քաջողվում կատարել (Անդոկ, Առնոս, Ատիս, Արագած, Երտիա և այլն): Պարզ անվանումների մի այլ մասը հայտնի արմատներ ու բառեր են: Օրինակ Ճոր, Ծիր, Խսիր, Խրամ, Խոր, Խոչ, Խոյթ, Խար և այլն:

Պարզ կազմությամբ անվանումների մի մասը գոյականներ են (Առյուծ, Անգղ, Ահեր, Գմբեթ, Կատար, Գյուղ, Գոգ, Դետ, Դրախտ, Դրամ, Երախ, Չամպ, Թաս, Թուր, Լաստ և այլն): Դրանք կարող են լինել թեք հոլովածներ և հոգնակիի ձևեր (Ականյաց, Ակներ, Աղերով, Անծևացյաց, Ապոց, Աջի, Ալեկանց, Արեղներ, Գրման, Բուժունյաց, Բոգու և այլն):

Մի այլ մասը ածականներ են (Ազատ, Ավագ, Աժդահա, Կապույտ, Խրթին, Բարակ, Բուք, Դեղին, Չվարթ, Թատամ, Թարս, Թեժ և այլն): Բնականաբար, սրանք փոխանուններ են, այսինքն դրանց լրացյալը (հիմնաբառ որոշյալը) գեղչված է, թեև հեշտությամբ վերականգնելի է, իսկ գիտական խոսքում սովորաբար վերականգնվում է (Բուք լեռ, Ազատ լեռ, Բարակ լեռնաշղթա, Խրթին լեռնազազաթ, Կապույտ լեռ և այլն):

Հազվադեպ լինում են բայածներ դերբայներ ու ժամանակածներ (Գոհանամ): Այլ խոսքի մասերը նույնպես հազվադեպ են (Դեմ լեռ):

Ածանցավոր անվանումները մեծ մասամբ թափանցիկ կազմություններ են ծանոթ ու հայտնի արմատներով ու ածանցներով (Կամք, Կանգարք, Կաղամախուտ, Կաթիլք, Ճովք, Ականիս, Աղի, Աղու, Աղոթարան, Ամպոտ, Անանուն, Աշնավոր, Աստղիկ, Բզնոց, Արտեմի, Արծվուտ, Արջանոց, Արեգունի, Աստվածային, Ավգյան, Ավբերուտ, Աղջկային, Ալկիրանք, Անդրտավրոս, Անահտական, Գոգորան, Դյուրին, Դրախտիկ և այլն): Բայց կան նաև անհայտ ծագմամբ և այլ բաղադրություններում չհանդիպող արմատներով անուններ (Կանգոնակ, Ամպոնի և այլն): Հազվադեպ լինում են նաև անծանոթ ածանցներով կազմություններ (Գնդուռ, Գոգորիս և այլն):

Բարդ անվանումները նույնպես մեծ մասամբ քափանցիկ կազմություններ են ծանոթ ու հայտնի արմատներով (Ազազեռանդ, Ալախպեր, Գազաթծակ, Արծաթասար, Գռասար, Գոմայր և այլն): Լինում են նաև անծանոթ արմատներով կազմություններ (Ապիտայգ, Աքիչքար, Ազրեքար և այլն): Դրանք ավելի հաճախ երկարմատ բարդ բառեր են: Օրինակ Ամուլսար, Այամդադ, Այրիդաշ, Այրիթափա և այլն: Հայերեն անունները կարող են լինել հողակապով: Օրինակ Կատարասար, Կամաքար, Ծովասար, Ծիրանքար, Ծծաքար և այլն: Բայց ավելի հաճախադեպ են անհողակապ կազմությունները: Օրինակ Կապուտկող, Կանաչկող, Կաղքար, Ծուռքար, Ծիրնկատար, Ծիրնքար, Խոցքար և այլն:

Լինում են նաև բարդ ածանցավոր անվանումներ: Օրինակ Այծպտկունք, Կաղնուտթունք, Արթունասար, Բարեգոտիկ, Իշխանասար, Բյուրակնյան, Ծաղկավանք և այլն:

Բարդ (և բարդ ածանցավոր) անվանումների առաջին (լրացնող) բաղադրիչն ըստ խոսքիմասային պատկանելության սովորաբար լինում է գոյական կամ ածական:

Գոյական սկզբնաբաղադրիչը կարող է լինել ուղիղ (չթեքված) ձևով (Արծաթասար, Արյունքար, Արջագլուխ, Արջքարեր, Եղնասար, Բոխիսար, Գամասար, Գնդասար, Եզնանիստ, Լիճկատար, Լևոնասար և այլն) կամ էլ սեռական հոլովով (Բաղացսար, Բլքիզուխ, Գարուսար, Դիմացեռ, Զանգիզուխ, Ընծաքիսար, Խաչիսար և այլն): Այլ հոլովներով դեպքեր հազվադեպ են հանդիպում (Եղերով):

Սծական սկզբնաբաղադրիչը սովորաբար լինում է որակական ածական (Բացրերան, Բոլորկոնդ, Բեյուքոյունեյ, Բոզթեփե, Թեքսար և այլն):

Հազվադեպ լինում են այլ խոսքի մաս (թվական, մակբայ, բայահիմք) սկզբնաբաղադրիչով կազմություններ (Եռաբլուր, Եռաթմբեր, Եռագագաթ, Բեշբարմաք թեփե, Ելասար և այլն):

Բավականաչափ տարածված են հարադրավոր լեռնանունները: Դրանց մի մասի վերջին բաղադրիչը լեռնանվան տեսակը նշող հիմնաբառն է (լեռ, սար, բլուր, թունք, քար, քերծ, ժայռ, պար, լեռնագագաթ, լեռնաշղթա, լեռնաճյուղ, լեռնաբազուկ, լեռնազանգված, լեռնաշխարհ և այլն): Վերջինս մեծ մասամբ անվան բաղադրիչ չէ, այլ նրա հետ կազմում է բառակապակցություն (Արագած լեռ, Արեգունի լեռնաշղթա, Արամազդ լեռնագագաթ, Բազուր լեռներ և այլն): Բայց հաճախ, մանավանդ երբ բուն անվանումը քերականական թեք ձև է, այդ հիմնաբառը դառնում է անվան բաղադրիչ (Անտիպոնտական պար, Անահտական լեռնաշղթա, Ախպերներ լեռնագագաթ, Ահեր լեռնաճյուղ, Արեգուն գլուխ, Արիմո լեռ, Ծովունք լեռներ, Ծխեկու սար, Խորխոռի ժայռ, Խոյի եղջյուր, Կաղամախյաց լեռ, Կայենի լեռ, Աղամանց-Քար, Աղբյուրի-սար, Արջայից լեռ,

հավարժիլի քար և այլն), երբեմն էլ կցվում է նրան, սերտաճում (Աղալուքար, Աղջկասար, Ամպիսար, Ամուլսար, Այծասար, Այրիսար, Անաքար, Անգեղասար, Աշոցքար, Աջասար, Ապակեքար, Ապիշքար, Աջասար, Առաջաքար, Առյուծասար, Առնուսար, Առջաքար, Ասեղասար, Ավագիսար, Ավանաքար և այլն): Այդ դեպքում լեռնանունը սովորաբար գործածվում է առանց հարադիր հիմնաբառի: Բայց գիտական շարադրանքում կամ համանուն այլ անվանումներից տարբերակելու նպատակով այդպիսի հիմնաբառ կարող է հարադրվել լեռնանվանը առաջ բերելով յուրատեսակ կրկնաբանություն (Դալիդաղ լեռ, Ուրասար լեռ, Աղասար լեռ, Աղբյուրի-սար լեռ, Աղլեռ լեռ, Ամպուլեռ լեռ և այլն): Կրկնաբանություն չի լինում, եթե հիմնաբառային ծագմամբ քաղադրիչը չի համընկնում բուն հիմնաբառին (Ազոավաքար լեռ, Ազրեքար լեռնագագաթ, Ալեքսանդար լեռնագագաթ, Ակատքար լեռնագագաթ, Ապուշքար լեռնագագաթ, Առաջնագլուխ լեռնագագաթ, Խաչմաչ խութ լեռնագագաթ և այլն): Դա լինում է այն դեպքում, երբ տվյալ անվանումը մի այլ լեռնանունից առաջացած երկրորդային լեռնանուն է:

Հարադիր հիմնաբառով լեռնանունները երբեմն ունենում են իրենց կցական տարբերակները: Օրինակ Ամբերդի սար - Ամբերդասար, Բարզուխդաղ - Բարզուխդաղ և այլն: Երբեմն տարբերակներ են լինում հիմնաբառով հարադրությունը և պարզ կազմությունը: Օրինակ Առնոսասար - Առնոս, Անթախու սար - Անթախ, Այրածո լեռ - Այրած և այլն:

Կան նաև բարդ լեռնանուններ, որոնց մեջ հարադրական կազմություն ունի հիմնաբառն ընկած մասը (Մեծ Աբուլ, Փոքր Աբուլ, Ճոտոտ բուլի, Գալի դրունք, Ազատ Մասիս, Աթոռ Անահտա, Արևմտյան Աղուսար, Այծու Պտկունք, Անատոլիական Տավրոս, Արսեիյակ մյուս, Բանակետեղ Թագավորաց Հայոց, Ավազ Գետիկ, Բերդատեղի Սատ, Բրջո Դլիճ, Գամեշի Չալ, Հին Գայլ, Գլուխ ծակ, Գլուխ Չագեծորի, Դից Մայրի, Եզան Անցք, Եղջեր Խոռ, Երեք Եղբոր լեռ, Խաչկոնց Կարիշ, Բաշ-Ղռան, Խարտու-Պուտուկ, Խլկոյ խաչի լեռներ և այլն): Սրանք էլ երբեմն ունենում են իրենց կցական տարբերակները: Օրինակ Այծու Պտկունք - Այծպտկունք:

Կան նաև երկրորդաբար լեռնանուն դարձած տեղանուններ: Լեռնանվանացման հիմքը կարող է լինել

1. Երկու առարկաների տարածական մերձավորությունը կամ համընկնումը (գետ - լեռ, ձոր - լեռ, երկրամաս - լեռ և այլն): Օրինակ Առաջածոր, Բաղաջուր, Աշոցք, Բալըգգյուլ և այլն:

2. Առաջնային առարկայի կողմնորոշիչ լինելը լեռնագրական միավորի համար (վանք - լեռ, բերդ - լեռ, խաչքար - լեռ, գյուղ - լեռ, աղբյուր - լեռ և այլն): Օրինակ Ամբերդ լեռ (քանի որ բերդը լեռան լանջին է և կողմնորոշիչ է նրա

համար), Ազգավախաչ, Ակսագոմեր, Ամենափրկիչ, Աստղաբերդ, Աստվածաշեն, Աչառի ծմակ, Բաշքենդ լեռ, Բաշյուրդ, Կոտառուն, Աուրի-Քիլիսա, Արքնադրյուր, Արփալիկայա, Ագարակ, Ագուլիս, Ակունք, Անտիոք, Աշմուշեն, Աշնակ, Առաքելոց և այլն:

Լեռնանուններն էլ հաճախ երկրորդաբար դառնում են այլ տեղանուններ վերոհիշյալ նույն երկու սկզբունքներով: Օրինակ՝ Արարատյան դաշտ, Արագյուղ:

Ինչպես երևում է, լեռնանունները մեծ մասամբ կազմված են «լեռ», «սար», «բլուր», «ժայռ» կամ «քար» նշանակող հիմնաբաղադրիչով: Դրան լրացնող բաղադրիչը սովորաբար որևէ ածական կամ գոյական է, որը բնութագրում է լեռնագրական տվյալ միավորը:

Այդ բնութագրումը հաճախ վերաբերում է առարկայի արտաքին հատկանիշներին: Դա կարող է լինել նկարագրություն՝

1. որևէ աչքի ընկնող արտաքին ներհատուկ նյութական և մշտական հատկանիշով (Գագաթձակ, Եռագագաթ, Թեքսար, Բուրլոկոնդ լեռ, Դաշբուլաղ՝ «քարադրյուր», Աղկայա՝ «սպիտակ ժայռ» և այլն),

2. սովորաբար բնորոշ արտաքին հատկանիշով (Ամպոտ լեռ, Ծաղկոտ լեռ, Արեգունի լեռ, Ամուլսար, Արծվոտ լեռնագագաթ, Բոխխար, Գարու լեռներ, Գիլուտ լեռ, Գյուլլիթափա՝ «ծաղկավետ բլուր», Դումանլիդաղ՝ «թխպոտ լեռ», Բուզդաղ՝ «սառույցի սար», Իլանդաղ՝ «օձասար», Այծասար, Անգղ լեռ, Գալլասար և այլն),

3. արտաքին տպավորության ուղղակի արտահայտված հատկանիշով (Գյոյդաղ՝ «կապույտ լեռ», Գարատաղ՝ «սև լեռ», Աղթափա՝ «սպիտակ բլուր», Ապակեքար, Արյունքար, Բերդաքար, Բոցիկ, Գմբեթ, Թուր, Լուսնկա, Թառակատար և այլն),

4. արտաքին տպավորության փոխաբերաբար արտահայտված հատկանիշով (Աղջկասար, Ասեղասար, Այծպտկունք, Աչքասար, Առյուծասար, Գավազան լեռ, Գնդասար, Գութանասար, Արջագլուխ լեռ, Ասլանգայա՝ «առյուծի ժայռ», Գառնըլարըխ՝ «ծկնականք», Դավագյոզ՝ «ուղտի աչք», Բուղաթափա՝ «ցուլի բլուր» և այլն),

5. ներքին հատկանիշով (Արծաթահանք, Բովեր լեռ, Գանձասար և այլն):

Այլ դեպքերում բնութագրումը վերաբերում է առարկայի հուզական գնահատականին, մարդկային վերաբերմունքին: Օրինակ՝ Աստվածային, Գեղարտ լեռ, Աղրիդաղ («վշտի սար»), Այրանլի («թանոտ»), Այրիդաղ («միայնակ լեռ»), Այրիջիդաղ («բաժանիչ լեռ»), Աշնալի («բարեկամ, ծանոթ»), Դալիդաղ («զիժ սար»), Գառնակեր և այլն:

Բնութագրումը կարող է լինել տարածական-հարաբերական: Օրինակ  
դիմաց լեռ, Աջասար, Առաջաքար, Առաջնագլուխ, Ավագ լեռ և այլն:

Լեռնանունների մի մասը պատճառաբանվում է դրանց վրա եղած որևէ  
առարկայով (Դավայաթաղ «ուղտերի հավաքավայր», Խաչքար լեռ, Աջառի  
ծմակ, Բերդի սար, Բյուրակնյան լեռներ, Երկաթադրյուր, Գյուղաղ «լճասար»,  
Գոմայր և այլն) կամ հարակից որևէ այլ առարկայով (Դարաչիչագ  
«ծաղկածոր», Գյոգալդարա «գեղեցիկ ծոր» և այլն):

Անվանումը կարող է նաև պատկանելություն նշել (Գյավուրդաղ  
«անհավատի լեռ»):

Կան դեպքեր, երբ բնութագրումը վերաբերում է առարկայի հետ առնչվող  
որևէ երևույթի: Օրինակ՝ Խնձորի սար, Խավարծիլի քար և այլն:

Երբեմն բնութագրման հիմք է դարձել առարկայի հետ անուղղակիորեն  
առնչված որևէ անձի անուն և մականուն: Օրինակ՝ Խև Յովհաննեսի քարեր,  
Արությունասար, Բարձր Գուրգեն լեռ, Բարսեղ Յայրապետ լեռ: Նման  
դեպքերում հնարավոր է որևէ ավանդության գոյություն, որն էլ բացատրում է  
լեռնանունը: Օրինակ Անահտա Աթոռ, Գրիգոր Լուսավորիչ լեռ և այլն:

Յաճախ լեռնանունը տարածք կամ երկրամաս նշանակող անունից  
կազմված սեռական հոլովածն է պատկանելության իմաստով: Օրինակ  
Արցախի լեռներ, Բզունյաց լեռներ, Ջանգեզուրի լեռներ, Վայքի լեռներ,  
Շիրակի լեռներ, Վիրահայոց լեռներ, Ջավախքի լեռներ և այլն:

Երբեմն լեռնանվան բուն անունն ինքը հիմնաբառ է, այսինքն առարկայի  
տեսակ նշանակող բառ: Օրինակ Բլուր լեռ, Կատար լեռ, Բլուրդաղ լեռ:  
Այսպիսի դեպքում լեռնանունը կազմված է լինում կրկնակի, երբեմն էլ եռակի  
հիմնաբառից:

Լրացնող բաղադրիչը հաճախ կրկնվում է մի շարք տարբեր լեռնանուն-  
ներում՝ համակցվելով նույն կամ տարբեր հիմնաբաղադրիչների: Օրինակ  
Կատարասար, Կատարաքար, Կատարկայա, Կատարի լեռ, Կատար երկրի:

Յայտատանի լեռնանունների այս վերլուծությունն ու դասակարգումը  
կարելի է շարունակել ու խորացնել: Սակայն այսքանն էլ ընդհանուր պատկե-  
րացում է տալիս դրանց իմաստակառուցվածքային առանձնահատկություն-  
ների մասին:



Еще в 1966г. Ф. Данеш отмечал, что центральной единицей анализа актуального членения является высказывание, которое в отличие от абстрактной модели предложения относится к определенному куску реальности, в конкретной ситуации и представляет собой органическую составную часть дискурса (текста). Данеш показал и методику схематического представления темы и ремы и их связей в пределах текста: для темы и ремы предложены стандартные обозначения Т и R, для связей в пределах некусного отношения между ними в границах высказывания – горизонтальная стрелка, а для внутритекстовых связей – вертикальная. Эти обозначения вошли в подавляющее число работ по актуальному синтаксису. [Слосарева 1981, 92]

В настоящей статье мы постараемся проанализировать проблематику актуального членения, которая получила свое развитие и у советских лингвистов. В советском языкознании существуют разные подходы к проблеме актуального членения предложения. Рассмотрим некоторые из них.

В.Г. Адмони различный смысловой вес членов предложения объясняет как выражение познавательной установки говорящего, которая и обуславливает различное построение предложения в отношении интонации и порядка слов. «Нормальное» строение предложения, по В.Г. Адмони, имеет место в том случае, когда подлежащее является исходным в предложении; такие предложения характеризуются прямым порядком слов. Случаи же, когда исходным выступает не подлежащее, а другой член предложения, рассматриваются как отклонение от «нормального» построения предложения, что выражается особой интонацией и обратным порядком слов. Что касается противоречия между грамматическим и смысловым членением, то у Адмони оно вырастает в «расхождение между реальной, логической последовательностью вещей и явлений в объективной действительности и познавательной установкой». [Адмони 1955, 45]

К.Г. Крушельницкая придерживается того взгляда, что члены предложения в каждом конкретном высказывании представляют собой единство двух значений: синтаксического значения и «коммуникативной нагрузки» – как «данного» и как «нового». В зависимости от коммуникативной нагрузки своих членов предложение по-разному членится на части: в них попадают разные члены предложения. Но это все же члены предложения с их основными грамматическими значениями. И поэтому вряд ли есть основания противопоставлять грамматическое членение (по членам предложения) смысловому членению. К.Г. Крушельницкая также утверждает, что рассматриваемое явление и по своей сущности, и по языковому выражению органически входит в синтаксис языка. [Крушельницкая 1956, 57]